# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 252- Ա

21 ապրիլի 2022 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 245-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ առանձին և միացյալ խորհուրդների ցանկն ու կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի ու հունիսի 18-ի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 245-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման N 2 հավելվածի 49-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջորագյուղի Հայրիկ Ղազարյանի անվան հիմնական դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում

1) «Ավետիսյան Արսեն Վահանի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Կարապետյան Երեմ Կարապետի /վերադասի ներկայացուցիչ/» բառերով.

2) «Ղազարյան Տարոն Ավետիքի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Քոչարյան Սևադա Վաղինակի /վերադասի ներկայացուցիչ/» բառերով.

3) «Սահակյան Էդվարդ Արամի /ՏԻՄ ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Մելքոնյան Զորայր Զոհրակի /ՏԻՄ ներկայացուցիչ/» բառերով.

4) «Քալոյան Արմեն Հայկարամի /ԿԳՄՍՆ ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Սարդարյան Արտաշ Սարգսի /ԿԳՄՍՆ ներկայացուցիչ/» բառերով:

21.04.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ